# Արձանագրություն N 6

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի(այսուհետ ՎԶՄԲ) միջև 2015 թ-ի ապրիլի 08-ին ստորագրված «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավման ծրագրի» 8495-ԱՄ և 2016 թ-ի մայիսի 12-ի ստորագրված «Էներգետիկայի ոլորտի ֆինանսական առողջացման ծրագիր» 8615-AM համաձայնագրերի , ՎԶՄԲ «Վարկերի ընդհանուր պայմաններ»-ի բաժիններ 5.08-ի և 5.09-ի դրույթների (այսուհետ Ընդհանուր պայմաններ) պահանջներին ԵրՋԷԿ-ի համպատասխանության ապահովման ծառայությունների ձեռք բերման նպատակով կազմակերպված՝

"ԵՐՋԷԿ-ՆՈ 01/17 ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի գնահատման նիստի/

ք. Երևան 3 օգոստոսի 2017թ
ժ.10:00

**<u>Մասնակցում էին՝</u>**

Հանձնաժողովինախագահ՝ Ա. Բաղդասարյանը
Հանձնաժողովիանդամներ ՝ Ա. Դադունցը
Ա. Զաքարյանը
Լ. Օհանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը
«Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ ներկայացուցիչ Գ. Ախոյանը

**<u>Օրակարգ</u>**

1. «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման մասին:
2. Գնային առաջարկների բացման նիստի հրավիրման մասին:

<u>Հարց 1</u>

«Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման չափանիշները հետևյալն են՝

| Գնահատման չափանիշը | Նվազագույն միավորը | Առավելագույն միավորը |
|---|---|---|
| Մասնագիտական փորձառություն | Առկա է կամ բացակայում է | |
| Տեխնիկական միջոցներ | | |
| Ֆինանսական միջոցներ | | |
| Աշխատանքային ռեսուրսներ | 15 | 25 |
| Տեխնիկական առաջարկ | 55 | 75 |

| | | |
|---|---|---|
| Ընդամենը | 70 | 100 |

1) "Մասնագիտական փորձառություն", "Տեխնիկական միջոցներ" եւ "Ֆինանսական միջոցներ" չափանիշների մասով մասնակցի որակավորումը գնահատվում է "Առկա է", եթե մասնակիցը համապատասխանում է այդ չափանիշների մասով հրավերով նախատեսված նվազագույն պահանջներին.

2) "Աշխատանքային ռեսուրսներ" չափանիշի մասով հրավերի պահանջներին առավելագույնս համապատասխանության դեպքում մասնակցի որակավորումը գնահատվում է "25" միավոր՝ լավագույն առաջարկ.

3) լավագույն տեխնիկական առաջարկի դեպքում՝ մասնակցի առաջարկը գնահատվում է "Տեխնիկական առաջարկ" չափանիշի գնահատման մասով նախատեսված առավելագույն՝ "75" միավորով:

Քննարկվեց, Առաջարկվեց՝

«Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հետևյալ միավորներով՝

| Գնահատման չափանիշը | Գանահտված միավորը |
|---|---|
| Մասնագիտական փորձառություն | Առկա է |
| Տեխնիկական միջոցներ | |
| Ֆինանսական միջոցներ | |
| Աշխատանքային ռեսուրսներ | 25 |
| Տեխնիկական առաջարկ | 75 |
| Ընդամենը | 100 |

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 4 Դեմ՝ 0

Հարց 2 Քննարկվեց, Առաջարկվեց՝

ա/ Հաշվի առնելով, որ Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ ներկայացուցիչը ներկա է սույն՝ Հայտերի գնահատման նիստին, և այն, որ համաձայն "ԵՐՋԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի 8.16 և 8.16.1 կետերի՝ պետք է սույն արձանագրությունը ծանուցմամբ հանձնվի Մասնակցին՝ նշելով գնային առաջարկների բացման նիստի օրը, վայրը եւ ժամը, ուստի՝ սույն արձանագրությունը "ԵՐՋԷԿ-ՆՈ 01/17" ծածկագրով երկու փուլով մրցույթի ընթացակարգի երկրորդ փուլի հրավերի 8.16 կետով նախատեսված կարգով Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ ներկայացուցչին փաստաթղթային և էլեկտրոնային եղանակով հանձնումը համարել միաժամանակ ծանուցում սույն արձանագրությամբ որոշված՝ գնային առաջարկների բացման նիստի օրվա, վայրի եւ ժամի մասին:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 4 Դեմ՝ 0

բ/ Գնային առաջարկների բացման նիստը հրավիրել ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք թիվ 3 հասցեում 2017 թ-ի օգոստոսի 3-ին ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 4 Դեմ՝ 0

**Գնահատող հանձնաժողովը Որոշեց՝**

1. «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հայտը գնահատել բավարար:

2. Գնային առաջարկների բացման նիստը հրավիրել ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք թիվ 3 հասցեում, 2017 թ-ի օգոստոսի 3-ին ժամը 15:00-ին:

3. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ սույն արձանագրության հաստատումից անմիջապես հետո՝ դրա բնօրինակից արտատպված (ականավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում, միաժամանակ՝ էլեկտրոնային եղանակով ուղարկել նաև «Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին, իսկ փաստաթղթային տարբերակի մեկ օրինակը հանձնել Դի Ջի Քոնսալթինգ» ՍՊԸ ներկայացուցիչ Գ. Ախոյանին:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Դադունց

Ա. Զաքարյան

Լ. Օհանյան

Հանձաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյան